# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ–երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) վերաբերյալ

| Համայնքի անվանումը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| Ջրաշեն | Ավագանու հերթական նիստ | 19.11.2021թ. | 12:00 | Ջրաշենի համայնքապետարան (գ. Ջրաշեն 8Փ. 32) |

**ՆԱԽԱԳԻԾ 42**

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 9
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ջրաշեն համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 19-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ 43**

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ջրաշեն համայնքի 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 44-Ա**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

<<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 26-ի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին> թիվ 16-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**